# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Մայր Աթոռի Միաբանությունը մայիսի 9-ի Հաղթանակի պատմական Օրը տոնեց խանդավառությամբ ու պատշաճ հանդիսավորությամբ։

Մայր Տաճարում հանդիսավոր մաղթանք կատարելուց հետո, Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Տ. Գևորգ արքեպիսկոպոսը շնորհավորական հեռագիր հղեց Հայաստանի Ժողկոմսովետի Նախագահին։

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ Տ. ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ։

«Մեր և Սուրբ Էջմիածնի վանքի միաբանության կողմից շնորհավորում ենք Հայրենական պատերազմի հաղթական ավարտումը։ Այսօր, մայիսի 9-ին Սուրբ Էջմիածնի մայր տաճարում ողջ միաբանության մասնակցությամբ և բազմաթիվ աղոթողների ներկայությամբ կատարեցինք հանդիսավոր մաղթանք, վերառաքելով մեր աղոթքները բարձրյալին պարգևելու մեծ առաջնորդ Ստալինին երկար կյանք և առողջություն և Կարմիր Բանակին ուժ ու զորություն»։

(«Սովետ. Հայաստան», մայիսի 12, 1945 թ. № 94 (7347)